

ԱՂՁՆԻՔԱՅԱՅԵՐԻ ՆՇԱՆԱՂՈՒԹՅԱՆ
ՍՈՎՈՐՈՒԹՅՆԵՐԻ ՈՒ ԾԵՍԵՐԻ ՇՈՒՐՁ

Ռ. Ա. ՆԱՅԱՊԵՏՅԱՆ

Հայ պատմաագագագրական գրականության մեջ սակավ ուսումնասիրված մարզերից մեկը պատմական Հայաստանի Աղձնիք նահանգն է, որի տասը գավառներից միայն Սասունն է քիչ թե շատ արժանացել ուսումնասիրողների ուշադրությանը: Մնացած գավառներն ուսումնասիրված չեն ոչ պատմաաշխարհագրական, ոչ էլ տնտեսամշակութային առումներով: Այս բացը մասամբ լրացնելու նպատակով, հիմնվելով մեր հավաքած դաշտային ազգագրական նյութերի վրա¹, ուսումնասիրել և հրատարակել ենք հայոց ամուսնաընտանեկան ծեսերին նվիրված երեք տասնյակից ավելի աշխատանքներ: Այս հոդվածը նպատակ ունի համայնել նշյալ շարքը՝ պատկերացում տալով ամուսնահարսանեկան ծիսաշարի փուլերից մեկի՝ նշանադրության վերաբերյալ:

Ինչպես պատմական Հայաստանի գրեթե բոլոր ազգագրական մարզերում, այնպես էլ Աղձնիքում գյուղական համայնքի գործող իրավասովորության կարգի պայմաններում ամուսնությունը պաշտոնապես ճանաչվում և իրավական կիրարկման ձև էր ստանում հարսանեկան ծեսերի ու սովորույթների բազմատարր համակարգի իրագործումից հետո միայն: Նշենք, որ հարսանեկան ծիսաշարը ներառում է կենցաղավարման մեջ հաջորդական երեք հիմնական փուլ՝ **խնամախոսություն, նշանադրություն և բուն հարսանիք**:

Աղձնիքում նշանադրությունը կոչվում էր **նշանդրեք** կամ **նշանուր**: Ելնելով բովանդակությունից՝ նշանդրեքի ծիսաշարին կարելի է դասել նաև **հացկտրելը, կեսպասկը, խալանկտուրը** կամ **կթխան-խոլաթը**²:

Նշանդրեքն ամուսնահարսանեկան ծեսերի առաջին փուլի վճռորոշ պահն էր: Աղձնիքում այն իրագործվում էր հրատարակավ, առանց ավելորդ զգուշավորության, հատուկ նախապատրաստությամբ ու շքեղությամբ:

Ըստ Հ. Աճառյանի՝ **ոճառ** – նշան բառի ծագումը պահլավական, պարսկական է՝ «նշան, նիշ, դրոշմ, հետք, զինանշան, դրոշակ, նպատակ, անգամ»՝ իմաստներով: Հայերենում, մեզ հետաքրքրող տեսակետից, բառը գործածվել է «նշանադրություն», «նշանել» իմաստներով: Այստեղից էլ գործածության մեջ են մտել մի շարք բառեր՝ **նշանախոսություն, նշանած, նշանդրեք, նշանդարչեք, նշանդարեք, նշանօրհներ** և այլն:

Նշանադրությունը աշխարհիկ իրավական գործարք կամ պարտավորություն էր, որը ծագել է հեթանոսական անցյալում և գոյությունը պահպանել ավատական Հայաստանում, թեև հաղթանակած քրիստոնեությունը միջամտեց այդ հարաբերությանը, նորմավորեց նրա առանձին պայմաններ, արգելեց հեթանոսական որոշ սովորույթներ³: Թե՛ նշանադրությունը և թե՛ պասկադրությունը ինքնուրույն իրավական հարաբերություններ էին, և երկուսն էլ ծառայում էին մեկ նպատակի՝ ամուսնությանը՝ ընտանիք կազմելուն: Նշանադրությունը ամուսնանալու

¹ Տե՛ս Ռ. Նահապետյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետ՝ ԴԱՆ):

² Տե՛ս ԴԱՆ, տ. I, էջ 56, 63-64, 191:

³ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. III, Եր., 1977, էջ 460:

⁴ Տե՛ս Ս. Հ. Հովհաննիսյան, Նշանադրությունը վաղ ավատական Հայաստանում, ՊԲՀ, 1971, քիվ 3, էջ 193:

փոխադարձ պարտականություն սահմանող կամային իրավական պարտավորություն էր: Այն դարերով մշակված իրավական հաստատություն էր, որի ծնունդը թելադրված էր դարաշրջանի տնտեսական հարաբերություններով, երբ նյութական հաշիվները դարձան հասարակության շարժիչ լծակներ: Ամուսնանալով՝ մարդու բնական հակումը միահյուսվեց անհատի և նրա տոհմի նյութական շահերին, որոնք պահանջում էին կոռոջ իրավունքով ընտանիք մտնող նոր անդամից որպես կույս մտնել ամուսնու մահիճը: Այդ բարոյական պահանջը չխախտելու նպատակով մեր նախնիները մտահոգվել են մինչ ամուսնությունը աղջկա ողջախոհ վարքի համար: Դրան էր ծառայելու նշանադրությունը⁵:

Նշանադրության հավաստիք-խորհրդանիշը փեսացուի և հարսնացուի փոխանակված մատանիներն էին, որը բոլոր ժամանակներում ունեցել է որոշակի խորհուրդ՝ ամուսնության ապացույց ի տես շրջապատի: Նշանադրությունը իրականացնում էին մեծահասակ հարազատները: Իրավաբան Ս. Հովհաննիսյանը գրում է, որ Հայաստանում, դեռևս վաղ ավատական շրջանից սկսած, նշանադրության գործարքի իրավական սուբյեկտ էին նշանադրվող կողմերը, բայց նրանց անունից պարտավորությունը իրականացնում էին ծնողներն ու մերձավոր ազգականները, հանգամանք, որ պայմանավորված էր դարաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերություններով և պարտավորության բնույթով⁶:

Խոսկապից մինչև նշանդրեք երկար չէր տևում, սովորաբար՝ մեկ-երկու շաբաթ: Նշանդրեքը հիմնականում տեղի էր ունենում ժողովրդական տոներին, հատկապես Ծառգարդարին ու Վարդավառին: Ամենահարմար օրեր դիտվում էին **չորեքմուտը, ուրբթմուտը և կիրակմուտը**՝ իբրև պտղաբերության հովանավորների օրեր, իսկ օրվա պահ՝ երեկոն՝ արևամուտից հետո⁷: Նշանդրեքից մի քանի օր առաջ փեսացուն և նրա հայրը, քավորին նվիրվող գառան վզին կարմիր շոր կապած, գնում էին **քավորկանչի**, որպեսզի նրան մասնակից դարձնեն նշանդրեքի ծեսին: Նշանադրության ժամանակ մարդիկ ղեկավարվում էին որոշակի սովորութական և իրավական ծեսերով ու կարգով: Դրանք իրարահաջորդ գործողություններ էին, որոնց շնորհիվ որոշակի անհատներ ստանձնում էին հարսնացուի և փեսացուի փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները:

Տղայի կողմից նշանդրեքին մասնակցում էին հայրը, քեռին, հորեղբայրը, ավագ եղբայրը, ազգականներից հարգանք վայելող որևէ տղամարդ, ինչպես նաև մայրը, հորեղբոր կամ եղբոր կինը, մի խոսքով՝ **դանեղան** (աչքի ընկնող) կանայք, նաև գյուղի ռեսն (գյուղապետ) ու քահանան⁸, որոնց ներկայությունն այս հանդեսին պարտադիր էր Հայաստանի գրեթե բոլոր վայրերում⁹: Նրանց թիվը հասնում էր 10-12 հոգու, իսկ խումբը կոչվում էր **նշանվորներ** (նշանդնողներ):

⁵ Տե՛ս Ս. Հովհաննիսյան, Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում, Եր., 1976, էջ 122:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 125-126:

⁷ ԴԱՆ, տ. 1, էջ 60, Ըստ Ե. Լալայանի՝ Հայաստանի այլ վայրերում գրառած որոշ նյութերում նշանդրեքի օրերը համընկնում էին ժողովրդական մի քանի տոների հետ, ուստի և նշանդրեքը հենց այդ տոների անվամբ էլ կոչվում է. ինչպես՝ «Ծաղկազարդի նշանադրություն», «Վարդավառի նշանադրություն» և այլն (տե՛ս Ե. Լալայան, Վարանդա, Երկեր, հ. 2, Եր., 1988, էջ 114, նույնի՝ Գանձակ, նույն տեղում, էջ 245-246):

⁸ Որոշ վայրերում տրվելիք նշանը վաղօրոք եկեղեցի էին տանում և օրհնել տալիս քահանային, ուստի և վերջինիս ներկայությունը նշանդրեքին պարտադիր չէր (տե՛ս Տիգրան Մկուրդ, Ամիտայի արձագանքները, հ. Ա, Ուիհոքն Նի Դերզի, 1950, էջ 401: Ե. Լալայան, Մուշ-Տարոն, ԱՀ, գ. XXVI, Թիֆլիս, 1916, էջ 158):

⁹ Տե՛ս Ե. Լալայան, Գանձակ, Երկեր, հ. 2, Եր., 1988, էջ 246, նույնի՝ Վարանդա, էջ 121-122, նույնի՝ Բորչալու, ԱՀ, գ. IX, Թիֆլիս, 1902, էջ 212-245, Մտ. Լիսիցյան, Չանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 186, Բենսե (Մահակ Մովսիսյան), Հարք (Մշո Բուլանդիս), Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետ՝ ՀԱԲ), Եր., 1972, էջ 93-95:

Աղջկա կողմից մասնակից հարազատների թվում էին ծնողները, քեռին, հորեղբայրը, դարձյալ որոշակի համարում ունեցող ազգակից ու մտերիմ տղամարդիկ և կանայք՝ շուրջ 15 հոգի¹⁰:

Նշանդոեքի ծախսերը մեծ մասամբ պարտավոր էր հոգալ տղայի ընտանիքը: Խարզանի Մլքիշան և Բըրա գյուղերում աղջկա ծնողներն աննշան ծախս էին անում¹¹: Նշանվորները սովորաբար աղջկա տուն էին տանում 2-3 ոչխար՝ կենդանի կամ խորվու, երբեմն՝ մեկ արջառ, մեկ խիդր (4-5 կգ) յուղ, մեկ-երկու կոտ (1 կոտը – 8 կգ) բլրուր, ինչպես նաև՝ գինի, մրգեղեն ու անուշեղեն: Այդ մթերքներն աննկատ կերպով նշանվորներից առաջ տանում էր **աղվեսը**՝ ճարպիկ մի մարդ, որը միաժամանակ խնամիներին տեղեկացնում էր նշանվորների գալստյան մասին¹²:

Բաղեշում **նշանվորները** (8-12 մարդ) առանց փեսայի մեկնում էին մթնով: Նույնքան և ավելի մարդ մասնակցում էր աղջկա կողմից: Իրենց հետ տարվող ուտեստի մեջ մեծ էր ընդդեմնի ու քաղցրեղենի բաժինը՝ **կանթ** (գլուխ) շաքար կամ փենի շաքար, չամիչ, խուրմա, պաստեղ, նաև գեթուն, իսկ որպես խմիչք՝ տղամարդկանց համար չամչից պատրաստված օղի, կանանց համար՝ կանթ շաքարից պատրաստված շարբաթ: Ուտեստեղենը մատուցվում էր պղնձյա նախշազարդ **թեպսի** կամ **լանկյառի** կոչված մատուցարաններով¹³:

Տոնականորեն զգեստավորված նշանվորներին աղջկա հոր տանը դիմավորում էին հոտնկայս. փեսան քավորի հետ կանգնում էր դռան առջև ու ներս չէր մղտնում, մինչև աղջկա մայրը կամ քեռին ներս չէին հրավիրում՝ տալով քաղցրեղեն: Փեսայի հարազատները կատակելով հարցնում էին հարսի հորը, թե ինչ նվեր է տալու փեսային: Մինչև նվեր չխոստանալ, փեսան ներս չէր գալիս: Այնուհետև վերջինս համբուրում էր աներոջ ձեռքը, սա էլ՝ նրա ճակատը, ու ներս էին մտնում: Ապա թաղիք էին փռում օջախի աջ ու ձախ կողմում, որի վրա ըստ ավագության նստում էին տղամարդիկ: Կանայք նստում էին առանձին՝ տան՝ կանանց հարկաբաժնում՝ **վերին տանը**, ուր գտնվում էր նաև հարսնացուն: Սկսվում էր թատերականացված երկխոսությունը: Տղայի կողմի տարեց տղամարդկանցից մեկը, խոսքն ուղղելով աղջկա հորը, ասում էր, որ իրենք եկել են մի «լաչակ խնդրելու»: Աղջկա հայրն էլ դիմում էր կնոջը. «Գընիգ, դու ես կաթ տվել մեր աղջկան, ի՞նչ է քո միտք»: Վերջինս պատասխանում էր. «Մարդ քու և եկող հարգելիների կամքը թող լինի»: Աղջկա հայրը, դառնալով իր խոսակցին՝ տղայի կողմի **լաչակ խնդրողին**, պատասխանում էր. «Բարով, հազար բարի եք եկել, թող լինի, Աստված թող մեզ չամաչեցնի»: Այնուհետև սկուտեղով մեջտեղ էին բերվում հարսնացուի նշան-նվերները¹⁴:

¹⁰ Տե՛ս ԴԱՆ, տ. 1, էջ 59-61:

¹¹ Ըստ որոշ բանասացների՝ աղջկա կողմը Բաղեշ քաղաքում պատրաստություն էր տեսնում՝ սեղանին դնելով քյուֆթա, տոլմա, երբեմն՝ խորոված, օղի, փախալավա, հալվա և այլ քաղցրավենիք և մրգեղեն (ԴԱՆ, տ. 1, էջ 59), մինչդեռ Աղձնիքի հովտային, քրդախառն շրջաններում ոչ մի ծախս չէին անում, ինչպես կատակով ընդունված էր ասել՝ «բացի չրից» (տե՛ս ԴԱՆ, տ. 13, էջ 11):

¹² Եթե «աղվեսը» խորամանկությամբ խաբս չտար և աղջկա գյուղի կամ թաղի երեխաներն իմանային, նրան կհալածեին՝ գոպկը թոցնելով, ոչխարը խլելով, մոխրափոշով մրտտելով, կատակով ծեծելով, «հոգին հանելով», որը վերջ կունենար խնամիներից մեկի օգնությամբ՝ «գերությունից փրկելով» (տե՛ս ԴԱՆ, տ. 13, էջ 10-11): Արևելյան Հայաստանում «աղվեսը» հանդես էր գալիս հարսանիքի առաջին օրը, քանզի նշանդոեքի ծախսերն այստեղ անում էին աղջկա, իսկ հարսանիքինը՝ տղայի ծնողները (տե՛ս Գ. Ս. Վարդումյան, Է. Տ. Կարապետյան, Հայաստանի կուլտոսեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Եր., 1963, էջ 112-113):

¹³ Տե՛ս ԴԱՆ, տ. 1, էջ 60:

¹⁴ ԴԱՆ, տ. 13, էջ 15-16: Տե՛ս նաև Վ. Պետոյան, Սասնա ազգագրություն, Եր., 1965, էջ 239-240:

Հարսին տրվող նվերների մեջ, նայած ընտանիքի նյութական կարողության, շատ էին լինում զանազան ոսկե, արծաթե և վարշաղե զարդերը: Ունևոր ընտանիքները որպես նշան բերում էին քրամիցա կոչվող բարձրորակ ոսկե ապարանջան, մատանի, մի թելի վրա ամրացված ոսկիների շար, որով զարդարված էր լինում նշանդրեքի անբաժան տարր հանդիսացող կանթ շաքարը, հարսի շրջագգեստի կրծքամասում ամրացվող շմսի կոչվող արծաթե զարդը, դըրզի արծաթե օղակաշղթա, որից կախված տերևաձև նախշազարդ փլիքները գրնգում էին քայլքի ժամանակ, արծաթե վզնոց՝ գանրդանի, արծաթե գոտի և նրան ամրացված բընքներ կոչվող փլիքներով արծաթյա շղթա, որին երբեմն փոխարինում էին Դիարբեքիի արհեստավորների պատրաստած մետաքսե կամ տեղական շալե գոտիները և այլն: Նվիրվում էր նաև կարմիր ու նարնջագույն մետաքսե գլխաշոր: Համեմատաբար աղքատ ընտանիքները հիմնականում արծաթե և վարշաղե զարդեր էին տանում՝ մատանի, վզնոց, 2-3 շար ուլունք, ականջօղեր, ապարանջան, մետաքսե գլխաշոր և այլն¹⁵:

Ինչպես Հայաստանի այլ շրջաններում¹⁶, Աղձնիքում ևս նշանդրեքի խնջույքի հանդեսին փեսացուին և հարսնացուին ներկայացնում էին միայն նշանը հանձնելու պահին: Թեև Աղձնիքի հովտային որոշ շրջաններում նշանդրեքին փեսացուն նույնիսկ չէր մասնակցում, իսկ հարսնացուն հրավիրվում էր իր համար բերված նշանի, հագուստի ու զարդերի հանձնման և դրանք քահանայի օրհնելու ժամանակ: Այդ հանդիսավոր պահին հարսնացուն պարտավոր էր համբուրել բոլոր հյուրերի ձեռքերը: Նա ներկայանում էր որևէ տարեց կնոջ ուղեկցությամբ՝ գլուխը խոնարհած նշանացի ողջունելով ներկաներին: Նշանդրեքին հրավիրված քահանան օրհնում էր բերված նվերները և հերթով հագցնում հարսնացուին: Սկըսվում էր ներկաների նվիրատվությունը: Տղայի կողմի բարեկամներից մեկը (հաճախ՝ քավորը) դառնում էր կանչող և բարձրաձայն հայտարարում նվեր տվողների անունները, ազգակցական աստիճանը և նվերի անվանումը: Հանդիսականները միաբերան գոչում էին. «Աստված շնորհավոր անի»: Նվերներն օրհնելուց բացի քահանան կատարում էր նաև հաց կտրելու արարողությունը: Իրար վրա դըրված երեք լավաշ հացերի մի կողմից բռնում էր տղայի, մյուսից աղջկա հայրը: Քահանան հարցով դիմում էր նախ աղջկա, ապա տղայի հորը՝ ընտրության և նշանադրության հարցում նրանց փոխադարձ վերջնական համաձայնության մասին: Խնամիները, երիցս հավաստելով իրենց համաձայնությունը, ձգելով կտրում էին լավաշները՝ մի մասը տալով հարսին, մյուսը՝ փեսային՝ ուտելու: Նշանօրհնեքի և հաց կտրելու այս պահերը միասին կոչվում էին կեսպասակ¹⁷:

Այս ամենից հետո սկսվում էր նշանդրեքի հացկերույթը: Ճաշակում էին նշանվորների բերած մթերքները՝ շնորհավորական կենացներ ասելով ու բարեմաղթություններ անելով, ինչպես, օրհնակ, Բաղեշում. «Մի բալիշի վրա ծերանան», «Բումբարակ ըլնի», «Տղան ձեզ բումբարակ ըլնի, աղջիկը բումբարակ ըլնի տղի տիրոջ» և այլն¹⁸: Նշանդրեքը տևում էր մինչև լուսաբաց:

Նշանդրեքը և բուն հարսանյաց հանդեսը ամուսնության վավերացման ինքնուրույն փուլեր են և երևան են եկել հասարակության զարգացման տարբեր դարաշրջաններում: Առաջինը մայրական իրավունքի և մայրատեղային (մատրիլոկալ)

¹⁵ ԴԱՆ, տ. 1, էջ 59-65, տ. 13, էջ 10-11:

¹⁶ Տե՛ս Ե. Լալայան, Բորչալու, էջ 218, Մտ. Լիսիցյան, Չանգեզուրի հայերը, էջ 186, Վ. Ս. Թեմուրճյան, Գամիրքի հայերը (պատմա-ազգ. ուսումն.), ՀԱԲ, հ. 1, Եր., 1970, էջ 116 և այլն:

¹⁷ Տե՛ս ԴԱՆ, տ. 1, էջ 56, 63-64, 191:

¹⁸ Տե՛ս ԴԱՆ, տ. 1, էջ 63-64, 191:

չրջանի ամուսնության տոնն է: Երկրորդը հայրիրավական հարաբերությունների ծնունդ է, երբ հանդիսությունը խորհրդանշում էր հարսնացուի՝ տղայի տուն փոխադրվելը, քանզի ամուսնությունն արդեն դարձել էր հայրատեղային (պատրիլոկալ): Մասնագիտական գրականության մեջ այս միտքն առաջին անգամ հայտնել է Ն. Ա. Կիսլյակովը¹⁹: Հայ իրականության մեջ համանման կարծիք է արտահայտել Ս. Հ. Հովհաննիսյանը²⁰ ուսումնասիրելով ամուսնահարսանեկան սովորույթների զարգացման սկզբնական փուլը: Նրա հետազոտություններից պարզվում է, որ նշանադրությունից հետո գույզի՝ միմյանց ամուսին ճանաչելն ու կենակցելը ընդունելի սովորույթ էր վաղ ավատական Հայաստանում: Զրիստոնեության ընդունմանը հաջորդող դարերում նշանի հին պատկերացումների, մասնավորապես նշանվածներին մինչև պսակի խորհուրդը կատարելը միմյանց ամուսիններ ճանաչելու դեմ ուղղված պայքարն աստիճանաբար «ստանում է նոր ձև, ընդունվում են նշանի հարաբերությունները կարգավորող կանոնական նորմեր, սահմանվում են նշանի պայմանները՝ հոգևորականի ներկայությունը նշանին համարելով պարտադիր»²¹:

Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներում ուրույն տեղ ունեթև երկու կարգի երևույթ՝ օժիտը (*ջհեզ*) և գլխագինը (*խալան կամ դալան*), որոնց կենցաղավարման ձևերի, չափերի ու փոխադարձ հարաբերակցության բացահայտումը կարևոր նշանակություն ունի ավանդության ընտանեկան կենցաղում սոցիալ-ունեցվածքային, իրավական ու բարոյական մի շարք հանգամանքների ազգագրական ուսումնասիրության գործում: Այս հարցերը որոշ չափով լուսաբանված են (ինչպես ազգագրական, այնպես էլ իրավագիտական տեսանկյունից) թե՛ հայագիտության մեջ²², թե՛ օտար աղբյուրներում²³:

Աղձնիքում, ինչպես և Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում, սովորույթի համաձայն, նշանադրությունից հետո կողմերը պայմանավորվում էին, թե ինչ նյութական պարտականություն ունի իրենցից յուրաքանչյուրը: Այդ պայմանը կայացնելու պահն այստեղ հայտնի էր որպես դալան կտրել կամ խալան կտրել և խալանկտուր²⁴, որ բառացի նշանակում է «գլխագին որոշում»: Սասունում դալանի

¹⁹ Տե՛ս **Н. А. Кисляков**, *Семья и брак у таджиков*. — «Новая серия», т. XLIV, М., Л., 1959, էջ 218: Նույնի՝ *Некоторые брачные церемонии у народов Средней Азии и проблема материнского рода*. — МКАЭН, т. 4., М., 1967, էջ 239-244: Նույնի՝ *Очерки по истории семьи и брака у народов Средней Азии и Казахстана*, Л., 1969, էջ 98-99: **Н. П. Лобачева**, *К истории сложения института свадебной обрядности (на примере комплексов свадебных обычаев и обрядов Средней Азии и Казахстана)*, М., 1978, էջ 158-162, 165, 172-174):

²⁰ Տե՛ս **Ս. Հ. Հովհաննիսյան**, *Նշանադրությունը վաղ ավատական Հայաստանում*:

²¹ **Ս. Հ. Հովհաննիսյան**, «Մասնա ծոերը» հայ ընտանեկան իրավունքի պատմության կարևոր հուշարձան, ԲԵՀ, 1968, № 3, էջ 100:

²² **Կ. Կոստանեան**, Պոռույզ և տուայր. ԱՀ, գ. XIII Թիֆլիս, 1906, էջ 131-138, **Ա. Ղլտչեան**, Հայոց հին իրատւոքը, ընտանեկան իրատւոք, Ալեքսանդրապոլ, 1913, **Խ. Սամուելյան**, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 3, Եր., 1941, էջ 111-132, **Յ. Թ. Կարապետյան**, *Выкуп в свадебных обрядах армян и его социально-экономические корни*. — Աշխատություններ Հայաստանի պատմության պետական քանգարանի (այսուհետ՝ ԱՀՊՊ), հ. 3, Եր., 1950, էջ 73-146: Նույնի՝ *Օժիտը հայոց մեջ (պատմա-ազգագրական ուսումնասիրություն)*, Եր., 1978, **Ս. Հովհաննիսյան**, *Վարձանք-տուայրի և օժիտ-պորույզի իրավական կարգավորումը վաղ ավատական Հայաստանում*, ԲԵՀ, 1974, թիվ 2, էջ 132-148:

²³ Այս առումով բավական օգտակար են նաև **Մ. Օ. Կոստանի** և **Ն. Ա. Կիսլյակովի** ուսումնասիրությունները, տե՛ս **М. О. Косвен**, *Брак-покупка*, М., «Родовое общество», 1952, № 2, **Н. А. Кисляков**, *Калым и приданое у таджиков*. «Родовое общество», 1951, № 1, էջ 180-224:

²⁴ Այդ սովորույթը Հայաստանի տարբեր շրջաններում կոչվում էր «հոլ կտրել», «բարգյա կտրել», «կտրվածք», «տուր և առ» և այլն (տե՛ս **Յ. Թ. Կարապետյան**, *Выкуп в свадебных обрядах армян...*, էջ 109-111):

վերաբերյալ պայմանավորվելու կարգը կոչվում էր **խալանկություն** կամ **կրիսա**, որ կատարվում էր նշանդրեքից հետո: Աղծնիքի քրդական ենթակայության հովտային գյուղերում, օրինակ՝ Գալիոկում, դալան-խալանը²⁵ ավելի կայուն է պահպանվել: Այստեղ ևս խալանկությունը կատարվում էր նշանդրեքից հետո, որին մասնակցում էին տղայի ազգի մեծը՝ պատվավոր մի մարդ, հայրը, քավորը, քեռին, հարազատներ, համայնքում հեղինակություն վայելող մարդիկ: Նույն դիրքի մարդկանց հրավիրում էր աղջկա հայրը: Խալանկությունը ընթանում էր կողմերի միջև սակարկությամբ: Այստեղ, սովորույթի համաձայն, խալանը հասնում էր 5-7, երբեմն՝ 10 օսմանյան ոսկու: Արարատի մարզի Թայթան գյուղի 80-ամյա բնակիչ Հովհաննես Մերջիկյանի հավաստմամբ խալանի գումարի մի մասն էր ծախսվում օժիտի վրա: Խարզանի Մլքիշան, Բըրա և այլ գյուղերում աղջկա հոր տանը նշանդրեքի ու հարսանեկան բոլոր ծախսերը պարտավոր էր կատարել տղայի կողմը: Հարսանիքից մեկ օր առաջ նրանք պարտավոր էին աղջկա հոր տուն իրենց տարած մասցու ամասունը մորթել: Հոգում էին նաև սեղանին դրվելիք մթերքի ապահովումը՝ ձավար, բլդուր, խմիչք, մրգեր, անգամ սիսեռի չամիչ, ձմերուկի խարկած աղի կորիզ: Խմջույթի տաք կերակուրն այստեղ հիմնականում մսով բլդուրն էր: Այնպես որ, ըստ բանասացների, աղջկա ծնողները ոչ մի ծախս չէին անում²⁶: Այստեղ նշանդրեքին աղջկա հայրը պահանջում էր նաև աղջկա քեռու, եղբոր համար **նրկ** կոչվող նվերը, որն էր գենք, ձի, որոշ դեպքերում՝ դրամ: Ինչպես գրում է «Արևելքի» թղթակիցներից մեկը, այդ նույն շրջաններում «**խալան** կամ **պաշլուղ** բառին բուն նշանակությամբ աղջիկը դրամով ծախել այնչափ արմատացած է, որ սորա համար գյուղական ամուսնությունը գրեթե միշտ բռնի են»²⁷: Մեր համոզմամբ XX դ. սկզբներին աղջկա համար տրվող դալան կամ խալան կոչվող գլխագնի առկայությունը ոչ միայն տեղական ավանդույթի, այլև հատկապես քրդական մշակութային ազդեցություն է²⁸: Դալան (խալան) բառեզրը քրդերեն զalan բառն է՝ գլխագին նշանակությամբ: Սակայն հայերն Աղծնիքում **դալան** կամ **խալանկուր** բառեզրերն օգտագործել են ոչ թե **գլխագին**, այլ **բաժինք** նշանակությամբ: Այս շրջաններում հարսին հանձնվող նվերները բացառապես դրամական էին (սովորույթ, որ հայտնի էր **արքիի** անվամբ), որոնք ներառվում էին նրա օժիտի մեջ: «Երբ դեռ **խալան** (աղջկա գին) կար, տրվում էր 1-10-20 ոսկի՝ ըստ տղայի հոր կարողության և երկուստեք համաձայնության: Դա երբեմն երկար բանակցություններից հետո էր գլուխ գալիս, մերթ դժգոհություն էր առաջացնում, բայց միշտ լուծման հասնում: Իսկ երբ **խալանի** փոխարեն **կրիսան** էր մնացել, տրվում էր 1-2 ոսկի աղջկա հորը՝ որպես նվեր»: «Տղայի ծնողները, լինել իրենց սեփական միջոցներով կամ թե պարտք վերցրած, **դալանի** գումարն իրենց մոտ պատրաստ պետք է ունենային, որպեսզի կարողանային բաց ճակատով մարդկանց հրավիրել և գնալ խնամու

²⁵ Նյութերը գրառել ենք 1973 թ. փետրվարին՝ անհատական գործուղման ընթացքում, տե՛ս ԴԱՆ, տ. 13, էջ 15-16:

²⁶ Նյութերը ըստ Այնթափ գյուղի բնակիչներ 85-ամյա բանասացներ Հակոբ Մուրադյանի և Աբրահամ Գասպարյանի (1973 թ. փետրվար), տե՛ս ԴԱՆ, տ. 13, էջ 16-18):

²⁷ Տե՛ս «Արևելք», 1885, № 322:

²⁸ Աղծնիքի հովտային քրդախառն բնակավայրերում քրդերի շրջանում իրոք արմատացած էր «աղջիկ ծախելու» սովորույթը: Մեջբերենք մի հատված խնամիների երկխոսությունից. «Խնամի, մեր աղջիկը գեղեցիկ է, քան ջեյրանը, անուշ է, քան մեղրը, ազնիվ է, քան աղավնին, հեզ է ու խոնարհ, քան զառնուկը... այդ թանկագին մալը հավասար է աշխարհի արծեքին, մենք ծախեցինք քեզ, որ նա դառնա քո տան զարդերի ամենազվխավորը և ամենապատվականը... Աստված բախտավոր մալ անե, խերը տեսնես և բարի պտուղը վայելես: Ժողովուրդ, ասենք՝ անե՛ն» (տե՛ս Մ. Տ. Շվոտ, Բրդերը Տաճկաց Հայաստանում (ազգագրական նյութեր), Ս. Պետերբուրգ, 1905, էջ 204):

տուն՝ **դալանը** կտրելու»²⁹: Վ. Պետոյանը խալանի վերացումը կապում է 1904-1905 թթ. կոտորածների և բնակչության համատարած ընչազրկության, սոցիալ-տնտեսական վիճակի ծայրահեղ վատթարացման հետ: Այդ են վկայում նաև մեր հավաքած դաշտային ազգագրական նյութերը, որոնց համաձայն եղել է դեպք, երբ պարտք վերցրած մեկ ոսկով յոթ տարբեր ամուսնության գլխագին է վճարվել: Այդ առիթով ոսկու տերը կատակով ասել է. «Գնաց պտտավ, եկավ մտավ քսակի մեջ»³⁰: 1890 թ. Սասունի Մեմալ գյուղի ռես Մարտոյի որդի Գորբեն որոշում է իր եղբոր աղջկա դիմաց դալան չվերցնել, սակայն աղջկա ծնողներն ու մյուս ազգականները նման քայլը դիտում են որպես «անպատվություն» և հակառակվում են Գորբեին³¹: Համաձայն մեր գրի առած այլ նյութերի՝ Բաղեշում գլխագին տալու սովորույթ չկար: Ավելին՝ երբեմն աղջկա հորից պահանջում էին, որ տրվելիք օժիտը կազմի 15-20 ոսկու գնից ոչ պակաս, և դրանից քիչ լինելու դեպքում նույնիսկ հրաժարվում էին կայանալիք ամուսնությունից: Երիտասարդ գույզի ապագա ընտանիքը նյութապես ապահովելու նորաձիլ ավանդույթը դարձել էր ուղենիշ, որով և պետք է բացատրել բաղեշցու մտայնությունը, թե «Ավելի լավ է գրողը մտնի մարդու տուն, քան դատարկ հարսը»³²: Աղջկա ընտրության հարցում մեծ կարևորություն էր տրվում նրա հետ դրվելիք ոսկու չափին, մինչդեռ տղան տալիս էր ընդամենը 4-5 դուրուշ՝ այն էլ որպես **մոր կաթի գին (ծծագին)**: Խնամախոսության փուլում՝ ուզկանի ժամանակ, փեսացուի կողմից ավագ խնամախոսը հարսնացուի ծնողներին հայտնում էր հարսի հետ դրվելիք օժիտի չափի ու բաղադրության մասին³³: Սակայն Բաղեշի շրջակա գյուղերում դալան դեռևս վճարվում էր, որի զգալի մասը ծախսվում էր օժիտի համար³⁴: Մի աղբյուրի համաձայն՝ Բաղեշի գյուղական որոշ վայրերում տղայի հոր կողմից տրվող 15-20 ոսկին ամբողջապես ծախսվում էր աղջկա օժիտի համար: Բանասաց Աղավնի Ասատրյանի հավաստմամբ՝ իր ամուսնության ժամանակ Փիոնք գյուղի (Բաղեշ քաղաքի մոտակայքում է) բնակիչ Մուխսի Շավոն տալիս է 15 ոսկի «կալան» (դալան), որն ամբողջությամբ անցկացվում է հարսնացուի պարանոցը: Նույնքան ոսկի էլ օժիտի ծախս է անում բանասացի եղբայր Մերոքը³⁵: Այսպիսով, տղայի հոր տված գումարը ետ էր վերադառնում, ուստի այն գլխագին համարել չի կարելի: Բերված օրինակները բավական են ցույց տալու, թե Հայաստանի միայն մեկ պատմաազգագրական շրջանում ինչպիսի մեծ տատանումներ կային դալանի և օժիտի տարածվածության չափի ու դրանց հարաբերակցության հարցում:

Ազգագրական նյութերի համադրումից ակնհայտ է դառնում, որ XIX դ. վերջերին Աղձնիքում աստիճանաբար վերանում էր այսպես կոչված գլխագին-դալան տալու սովորույթը. դրա վճարումը երբեմն զուտ ձևական էր՝ դրսևորվելով որպես ավանդաբար սրբագործված մի երևույթ, որին (կենցաղավարման ուսումնասիրվող ժամանակահատվածում) հաճախ նպաստում էին սոսկ բարոյական և հոգեբանական բնույթի ազդակներ: Պարզ է դառնում նաև, որ, որոշ բացառություններով հանդերձ, աղջկա օժիտը հիմնականում պատրաստվում էր գլխագին հաշվին: Աղձնիքում հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ գլխագին չի տրվել, բայց առանց օժիտի

²⁹ Տե՛ս Վ. Պետոյան, նշվ. աշխ., էջ 240: Այդ նույն կարծիքին է նաև Ե. Կարապետյանը (տե՛ս Ե. Կարապետյան, Սասուն, ազգագրական նյութեր, Եր., 1963, էջ 86-87):

³⁰ ԴԱՆ, տ. 13, էջ 15-16:

³¹ ԴԱՆ, տ. 13, էջ 15-16:

³² ԴԱՆ, տ. 1, էջ 62, տ. 2, էջ 192:

³³ ԴԱՆ, տ. 1, էջ 58-59:

³⁴ Տե՛ս ԴԱՆ, տ. 2, էջ 192:

³⁵ ԴԱՆ, տ. 1, էջ 54-56: Այդպիսի տվյալների ենք հանդիպում նաև մամուլում (տե՛ս Բաֆֆի, Հայ կինը. «Մշակ», 1879, №№ 35-36):

ամուսնությունը գրեթե բացառված էր: Այս է վկայում նաև Խ. Սամուելյանը. «...շատ գավառներում օժիտը դարձել էր արդեն մի անհրաժեշտ պահանջ, ետ մղելով գլխագին տալու սովորությունը, որ հիրավի այդպիսի տեղերում սկսում է վերանալ և դառնալ մի մեռած ծես, հոգեվարքի մեջ ընկած մի սովորություն»³⁶: «Գնման արժեքը կամ ավելի շուտ դրա մի մասը, - գրում է Է. Տ. Կարապետյանը, - ...XIX դարի վերջում իրոք մտնում էր հարսնացուի օժիտի մեջ, սակայն այն օժիտի բարդ կազմի լոկ մի մասն էր»³⁷:

Հայագիտության մեջ երկար ժամանակ իշխում էր այն կարծիքը, թե դալան-գլխագինը հայոց կենցաղում եղել է իբրև աղջկան կին առնելու միջոց³⁸:

Հայոց մեջ գլխագին գոյության ուղղակի վկայություն է դիտվում նաև Խորենացու՝ Արտաշեսի և Սաթենիկի հայտնի առասպելը³⁹: Սակայն այստեղ աչքաբոլ է արվում էական մի հանգամանք. չէ՞ որ իր դստեր դիմաց գլխագին տալու Արտաշեսի անկարողության վերաբերյալ կասկած է հայտնում Ալանաց թագավորը միայն: Ուստի և՛ Արտաշեսի կողմից բավական լայքա, և՛ շատ ոսկի վարձանք տալը, և՛ օրհորդ Սաթենիկին առնելը⁴⁰, ըստ իս, դեռևս չի հաստատում այն փաստը, թե հայերը ևս ունեին նման սովորույթ:

Ինչպես տեսանք, դալանի ըմբռնումը առավել հակասական է ըստ XIX դ. վերջի և XX դ. սկզբի նյութերի: Այսպես, հայ հին իրավունքի հետազոտողներից մեկը՝ Ա. Գլուշյանը, կարծիք է հայտնել, որ, հայ իրավունքի համաձայն, «Նշանադրությունը վաճառման մի ակտ էր, ուր դաշնադիր (վաճառող և գնող) կողմերը պայմանավորվում են վաճառման օբյեկտի մասին», որ «նշանելիս, դաշնադիր կողմերն իբրև օբյեկտ ընդունելով աղջկան, ըստ էության, ծնողն իր ծնողական իշխանությունը փեսացուին փոխանցելու ակտով վաճառում է այդ իշխանությունը փեսային՝ որոշ վճար ստանալով»⁴¹: Հենց այն հանգամանքը, որ հայ ընտանիքում աղջկա ծնունդը այնպիսի ոգևորություն առաջ չի բերել, ինչպես տղայինը, ինքնին մերժում է գլխագին գոյությունը մեզանում⁴²:

Ինչպես պատմագրական, այնպես էլ ազգագրական նյութերը, կարծում ենք, բավարար հիմք չեն տալիս պնդելու, որ քրիստոնեության ընդունումից հետո հայ կինը նշանադրության ժամանակ եղել է վաճառման օբյեկտ: Նշանադրության ժամանակ աղջկա և նրա հարազատներին հանձնվող արժեքները դիտվում էին որպես ամուսնության առհավատյալ, հավաստիք, որպես նոր կազմավորվող դուստր ընտանիքի նյութական ապահովության երաշխիք: Դրանց չափը, ինչպես նշվեց, պայմանավորված էր կողմերի դասային և նյութական դրությամբ, իսկ ընչազուրկ դասերի շրջանում աննշան էր, փոխարենը փոխադարձ խոստումը կամ երդումը ունեցել է մեծ ուժ:

³⁶ Խ. Սամուելյան, Հայ սովորութեան իրավունքը: Առևանգմանը և գնմանը ամուսնություն, Թիֆլիս, 1911, էջ 93:

³⁷ Է. Տ. Կարապետյան, Օժիտը հայոց մեջ, էջ 63:

³⁸ Տե՛ս Խ. Սամուելյան, Հայ սովորութեան իրավունքը, էջ 40, 70-71: Յ. Թ. Կարապետյան, Выкуп..., էջ 78-79:

³⁹ Տե՛ս Կ. Ադոնց, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, էջ 188-194, Խ. Սամուելյան, նշվ. աշխ., էջ 70, Յ. Թ. Կարապետյան, Выкуп..., 78-79:

⁴⁰ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, բարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ստ. Մալխասյանցի, Եր., 1961, էջ 207:

⁴¹ Տե՛ս Ա. Գլուշյան, Հայոց հին իրավունքը, էջ 195-196:

⁴² Գնմանը ամուսնության գոյությունը նույնիսկ վաղ ավատական Հայաստանում համոզիչ կերպով քննել ու մերժել է իրավաբան Ս. Հովհաննիսյանը (տե՛ս Ս. Հովհաննիսյան, Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում, էջ 127-128):

Գնմամբ ամուսնության կենցաղավարման պատմական ակունքներն ավելի հին համարելու մտայնությամբ հաճախ վկայակոչվում են «վարձանք-տուայրի» վերացմանը կամ դրա կրճատմանն ուղղված միջնադարյան որոշ օրենքներ*։ Սակայն, ինչպես ցույց են տալիս Ս. Հովհաննիսյանի (թեև նա չի բացատրում գնմամբ ամուսնության գոյությունն անհիշելի ժամանակներում) հետազոտությունները, «...վարձանք-տուայրով անպույգ ամուսնությունը կարող էր ստեղծել գնմամբ ամուսնության պատրանք»⁴³։ Այդ իրավական պատրանքի համաձայն՝ կինը հանդես էր գալիս իբրև գնմամբ ամուսնության օբյեկտ, վարձանք-տուայր տվող փեսացուն՝ իբրև գնորդ, իսկ տուայրը՝ իբրև կնոջ գին։ Նա ապացուցում է, որ IV-V դդ. «...օրենքն այլևս վարձանք-տուայրը չէր դիտում իբրև աղջկա գին։ Եթե վարձանք-տուայրն այդպիսին լիներ, ապա այն ամուսնուն վերադարձվել չէր կարող և պիտի մնար աղջկա ծնողներին՝ ի տնօրինություն»⁴⁴։

«Ամուսնական սակարկությունը, - գրում է Վ. Թեմուրճյանը, - հայերի մեջ դեռ շատ վաղուց կորցնելով առ ու ծախի իր սկզբնական բնույթը, պահպանվում էր նվիրատվության ձևով։ Ուստի և գլխագինը՝ որպես նշանվող աղջկա փոխարժեք, հայերի կենցաղում վերանալով, պահվում էր միայն աղջկան, նրա մորը և եղբորը տրված նվերների ձևով»⁴⁵։ Այս առումով ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հայերի մեջ գլխագին մասին պայմանավորվում էին նշանդրեքից հետո միայն։ Իսկ եթե նշանդրեքն իսկապես դիտվում է որպես երբեմնի փաստական ամուսնություն, ապա պարզ է դառնում դալան-գլխագին՝ իբրև կին գնելու միջոցի սուկ առերևույթ լինելը հայոց մեջ⁴⁶։

Գնմամբ ամուսնությունը, որ հայտնի է դեռևս նախաքրիստոնեական ժամանակաշրջանից, գրեթե առևանգման սովորույթին զուգընթաց, այլ նշանակություն է ունեցել։ Այն եղել է **փրկանք**, որ վճարվել է տղայի տոհմի կողմից աղջկա տոհմին, որպեսզի նախ հատուցվի աշխատավոր ձեռքի կորստի վնասը, ապա սրբվի առևանգմամբ տոհմին պատճառված վիրավորանքը։ Որոշ բանահավաքներ ու աղբյուրագետներ **գլխագին** եզրույթը բառացի են ընկալել։ Այսպես, անգամ անվանի գիտնական Խ. Սամուելյանը պնդում էր, թե ընդհուպ XX դարի սկզբները հայոց մեջ պահպանվել են գնմամբ ամուսնության վերապրուկները։ Թեև հենց ինքն էլ հետագայում ճշտում է, որ նոր՝ «մասնավոր սեփականության բացարձակ սկզբունքի» պայմաններում «Հայրն այլևս անկարող է լինում իր աղջկա համար գնման գումարի վրա այն իրավունքը բանեցնել, ինչ որ հատուկ է նահապետական գերդաստանին։ Ոչ թե հայրը, այլ աղջիկն է հանդիսանում տերը իր գլխագին ու ընծաների։ Ուստի աղջիկն այն գումարը, որ վճարել են իր անձի համար,

* Վաղ միջնադարյան աղբյուրները այն գումարը, դրամական և նյութական այն արժեքը, որ փեսայի հարազատների կողմից տրվել է հարսի հարազատներին՝ նրանց աղջկան կին առնելու համար, անվանել են **վարչանք** – **պուայր**, իսկ նյութական այն արժեքը, որ հարսնացուի մերձավորները տվել են աղջկան փեսայի տուն հարսնության ուղարկելիս՝ **օժիպ** – **պուայր**։ Մրանց ծագումը գիտնականները կապում են մասնավոր սեփականության առաջացման հետ (տե՛ս Ս. Հովհաննիսյան, Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում, էջ 70)։

⁴³ Ս. Հ. Հովհաննիսյան, Ամուսնա-ընտանեկան իրավունքը..., էջ 332։

⁴⁴ Ս. Հ. Հովհաննիսյան, Վարձանք-տուայրի և օժիտ-պուայրի իրավական կարգավորումը..., էջ 134։

⁴⁵ Տե՛ս Վ. Թեմուրճյան, նշվ. աշխ., էջ 119։

⁴⁶ Միջինասիական և կովկասյան շատ ժողովուրդների մեջ այն իրապես եղել է որպես աղջկա գին՝ փոխատուցում աշխատող ձեռքի դիմաց և վճարվել է մինչև նշանդրեքը (տե՛ս, օրինակ՝ Н. А. Кисляков, Очерки по истории семьи и брака у народов Средней Азии и Казахстана, էջ 81-82, Я. С. Смирнова, Семья и семейный быт народов Северного Кавказа, 1917-1967 гг., М., 1968, էջ 48-50)։

տանում է իբրև անճանական սեփականություն ամուսնու տուն: Ահա այստեղից էլ ծագում է մեր ժողովրդական կենցաղում ամուսնության հետ այնքան մեծ աղերս ունեցող բաժինքը, որը մեր գրականության մեջ հայտնի է նաև օժիտ անունով»⁴⁷:

Եթե մի ժամանակ ֆեոդալական կարգերին համապատասխան պահանջվում էր աղջկա համար գլխագին վճարել, ապա այժմ տղայի ու աղջկա ծնողները երկուստեք գումար էին տրամադրում, որը ծառայում էր զուտ օժիտ պատրաստելուն: Դա փաստորեն նոր երևույթ էր, որը դնում էր կապիտալիստական հարաբերություններին համապատասխանող ընտանիքի ապագա տնտեսության հիմքը: Ընդունելով Խ. Սամուելյանի այն կարծիքը, թե փոքր ընտանիքի պայմաններում աղջիկն էր տնօրինում նշանադրության ծեսերի ժամանակ գոյացած գումարը՝ չենք կարող ընդունել նրա՝ գլխագին գոյության վերաբերյալ տեսակետը: Մենք հակված ենք այն կարծիքին, որ տղայի հոր կողմից խալանկտուրի ժամանակ տրվող դրամական գումարը ոչ թե գլխագին էր, այլ հենց իր՝ պակվող տղայի բաժինը, որը, միանալով աղջկա հոր տված գումարին, ծնում էր նոր որակ՝ բաժինք, որը եղել է նորաստեղծ, երիտասարդ ընտանիքին սկզբնական շրջանում նյութապես ապահովելու, զորավիզ լինելու միջոց⁴⁸: Հենց սրանով էլ պետք է բացատրել այն հանգամանքը, որ շատ վայրերում նորապսակների առաջին 2-3 երեխաների հագուստ-կապուստի հոգսերն ընկնում էին ոչ թե ծայրը ծայրին հասցնող գերդաստանի կամ եռաստիճան ընտանիքի, այլ նորապսակների վրա: Իսկ վերջիններս ապավինում էին օժիտ-բաժինքին⁴⁹:

Ըստ Ս. Հովհաննիսյանի՝ դեռևս վաղ ավատական Հայաստանում վարձանքով և օժիտով ամուսնությունը ծնում է փոխադարձ իրավական պարտականություն: Խնամիացող ընտանիքների միջև ծագող նյութական հաշիվները և վարձանքը կնոջ առուծախ չեն խորհրդանշում, այլ փոխադարձ իրավունքներ և պարտականություններ սահմանելու գործառույթ, որի նպատակը ընտանիքի հիմքերն ամրապնդելն էր: Աստիճանաբար սահմանափակվում են սկեսրայրի և ամուսնու իրավունքները կնոջ օժիտի նկատմամբ, և ընդլայնվում են օժիտաբեր կնոջ իրավունքները վարձանքի և օժիտի նկատմամբ⁵⁰: Իսկապես, բաժինք-օժիտը, ամուսնուց և նրա ազգականներից ստացած նվերները, ծնողներից ժառանգման իրավունքով ձեռք բերած արժեքները դարձան կնոջ իրավունքների նյութական հիմքը ամուսնու ընտանիքում: Փաստորեն ընտանիքում գոյակցում էր սեփականության իրավունքի երկու ձև, որոնցից մեկի կրողը ավանդաբար շարունակում էր մնալ տղամարդը, իսկ մյուսինը դառնում էր կինը, որը սեփականատեր էր ճանաչվում օժիտի, ծնողներից ժառանգությանը ստացած արժեքների նկատմամբ:

⁴⁷ Խ. Սամուելյան, *Աղջիկը*, հ. 3, էջ 118-125:

⁴⁸ Նշանից հետո տղայի ու աղջկա ծնողները սակարկում են, թե ինչ պետք է տա տղայի հայրը աղջկա հորն իբրև խալան: Այն սովորաբար կազմում էր 3-30 ոսկի: Սակարկությունից հետո տղայի հայրը տալիս էր խոստացված դրամը, որպեսզի դրանով պատրաստեն աղջկա օժիտը (տե՛ս Ե. Լալայան, *Մուշ-Տարօն*, ԱՀ, գ. XXVI, Թիֆլիս, 1917, էջ 173):

⁴⁹ Ահա թե ինչ է գրում Մ. Օ. Կոսովնը այս կապակցությամբ. «Մեծ ընտանիքի տրուհումը և դրանից ընտանեկան փոքր բջիջների առանձնացումը հանգեցնում է յուրաքանչյուր երիտասարդ գույզի համար իր առանձին տնտեսությունն ստեղծելու անհրաժեշտությունը, իսկ դրա համար անհրաժեշտ է կողմնակի օգնություն: Գնմամբ ամուսնության նոր հարաբերություններով ստեղծված անցումային ձևը հանգում է նրան, որ հարսնացուի ծնողները, նրա համար վճար ստանալով, աղջկան օժիտ էին տալիս» (տե՛ս Մ. Օ. Կոսով, *Брак-покупка*, էջ 22):

⁵⁰ Տե՛ս Ս. Հովհաննիսյան, *Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում*, էջ 71:

Եթե փորձենք ընդհանուր գծերով ամբողջացնել նշանդրեքի սովորույթը, ապա կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական օրինաչափությունները.

Նշանդրեքի հանդեսը բավականին ներկայացուցչական էր ինչպես խնամիացող կողմերի ազգակցական խմբերի, այնպես էլ ողջ գյուղական համայնքի առումով: Հետևաբար այն՝ որպես ամուսնության գործարք, դուրս էր գալիս ընտանեկան իրավասության նեղ շրջանակներից՝ կրելով համայնքային բնույթ:

Թեև խոսկապով արդեն որոշակիորեն փոխադարձ պայմանավորվածության էին հասնում, այնուամենայնիվ նշանդրեքին ևս անհրաժեշտ էր համարվում ստուգել խնամիացող կողմերի վերջնական համաձայնությունը:

Նշանդրեքի համար նախատեսվող հիմնական ծախսերը անում էր տղայի ընտանիքը:

Համայնքի գեղջավազի (ոես) և քահանայի մասնակցությունը հանդեսին ամուսնության պաշտոնական վավերացման ու հավաստման նշանն էր: Դա առավել ևս հաստատվում էր կեսպսակի արարողությամբ: Այս ամենը հիմք է տալիս կարծելու, որ հայերի մեջ նշանդրեքի հանդեսն իր վաղնջական ձևով միտված էր փաստական ամուսնության նախապատրաստմանը:

Р. А. НААПЕТАН - Обычаи и обряд обручения у армян Ахдзника. - В статье дается общее описание обычая обручения и выделяются основные его особенности. Церемония обручения была достаточно представительной как со стороны участвующих в ней родственников, так и со стороны сельской общины. Как брачное соглашение, она выходила за чисто семейные рамки и носила общинный характер. Хотя сватовством уже достигалась взаимная договоренность, тем не менее считалось необходимым проверить при обручении окончательное согласие сторон. Основные расходы по обручению несла семья жениха. Участие в церемонии старосты и священника служило официальным подтверждением брака. Автор отрицает существование в конце XIX - начале XX веков выкупа как такового, считая, что в приданое девушке выдавалась сумма, которая впоследствии становилась собственностью молодой семьи.